

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՔՐԻՍՏԻՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ**

Հարգելի՛ տիկին Վարդանյան,

Ի պատասխան Զեր 19.04.2024թ. գրության՝ տեղեկացվում է, որ Երևան համայնքում 2023 թվականից իրականացվում է փողոցների վերաձևավորման և ձևափոխման աշխատանքներ, ինչն իրականացվում է Երևան քաղաքի ավագանու 18.11.2009 թվականի հ.36-Ն որոշման համապատասխան: Աշխատանքներն ընթանում են կենսունակության ավարտին մոտ, կենսունակությունը կորցրած, ամբողջովին դեֆորմացված ծառերի (Հիմնականում թեղի մանրատերև) փոխարինմամբ: Թեղի մանրատերև ծառերի խնդիրը Երևան համայնքում քաջ հայտնի է ոլորտի՝ բնապահպան փորձագետներին, քաղաքային կանաչապատման մասնագետներին, դենդրոլոգներին, ովքեր վերոնշյալի վերաբերյալ բազմիցս ունեցել են հանդիպում-քննարկումներ, գիտական վերլուծություններ, և այս խնդիրն ունի տասնամյակների պատմություն:

Այսպիսով, դեռևս շուրջ 15 տարի առաջ Երևանի քաղաքապետարանում եղել է մասնագիտական քննարկում՝ խորհրդի ձևաչափով, ոլորտի գիտնականների, փորձագետների մասնակցությամբ, որտեղ քննարկվող հարցը եղել է թեղի մանրատերև ծառատեսակը՝ իր համալիր հիվանդություններով, որը երևանաբնակ քաղաքացիների համար ստեղծել է խիստ անհարմարություններ: Քննարկման վերջնարդյունքում եղել է եզրակացություն առ այն, որ հնարավորինս հարցին լուծում տալու նպատակով անհրաժեշտ է թեղի մանրատերևների նկատմամբ իրականացնել հնարավորինս երիտասարդացման էտ՝ «խորը էտ» ձևակերպմամբ:

Քաղաքային իշխանությունների կողմից խնդիրն հետագա տրամաբանական լուծում տալու նպատակով 23.02.2023 թվականին կազմակերպվել է «Երևան համայնքում կենսունակության ավարտին մոտ գտնվող և ամբողջովին դեֆորմացված ծառերի փոխարինում արժեքավոր և գեղազարդ ծառերով: Ինվազիվ ծառերի հեռացում» խորագիրը կրող գիտական աշխատաժողով:

Գիտական աշխատաժողովի մասնակիցները, որոնք ներկայացնում են պետական գերատեսչական կառույցներ, ակադեմիական հիմնարկներ, ԲՈՒՀ-եր, միջազգային և հասարակական բնապահպանական կազմակերպություններ, համաձայն ներկայացված գիտական զեկուցումների և դրան հաջորդող քննարկումների՝ արձանագրեցին, որ Երևան քաղաքի կանաչապատման ներկայիս վիճակը դեռևս բավարար չէ քաղաքային կանաչ տարածքների առողջացման և հետագա զարգացման համար ներկայացվող ժամանակակից պահանջներին:

Երևան քաղաքի կանաչ տնկարկները լիարժեք չեն կատարում քաղաքային միջավայրին անհրաժեշտ էկոհամակարգային ծառայությունները՝ սանիտարական, էկոլոգիական և գեղագիտական: Փաստացի արձանագրվեց, որ Երևան համայնքում՝ ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում, գլխավոր և երկրորդական փողոցներում առկա են դեֆորմացված և կենսունակության ավարտին մոտ գտնվող ծառատեսակները (թեղի մանրատերև, հացենի սովորական և այլն), որոնք կորցրել են իրենց ֆունկցիոնալ նշանակությունը՝ աղտոտված օդային ավազանի մաքրման, փոշու, օդում կախված մասնիկների կլանման, աղմուկի մեղմացման, գեղագիտական տեսքի և այլ նպատակային նշանակության առումներով: Այսինքն, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքները շատ դեպքերում ապահովում են ընդամենը քանակային ներկայություն՝ պատշաճ չիրականացնելով իրենց ֆունկցիոնալ նպատակները:

Երևան համայնքում առկա ինվազիվ (այլանթ բարձրաբուն (*Ailanthus altissima*) և այլն) ծառատեսակները տարածված են ամենուրեք՝ կանաչ տարածքներում, շենք-շինությունների տարածքներում և հարևանությամբ՝ խախտելով բնակամիջավայրերի կայունությունը և մեծ վտանգ ներկայացնելով կենսաբազմազանությանը:

Գիտական աշխատաժողովի մասնակիցները՝ ուսումնասիրելով Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) կողմից ներկայացված Երևան համայնքում նախատեսվող տունկին ենթակա ծառափատեսակների ցանկը՝ արձանագրում են, որ առաջարկվող ծառափատեսակների և դրանց պարտիզային ձևերի ընտրության վերաբերյալ առարկություններ չկան:

Այսպիսով, գիտական հանրության ներկայացուցիչների կողմից հաստատվել է Երևան քաղաքում դեֆորմացված և կենսունակության ավարտին մոտ գտնվող և/կամ ինվազիվ ծառերի՝ առավել գեղազարդ և արժեքավոր ծառատեսակներով փոխարինման անհրաժեշտությունը՝ ֆունկցիոնալ, կայուն տնկարկների համալրման և զարգացման ռազամավարության շրջանակներում: Վերջինս հիմք կհանդիսանա Երևան քաղաքում կանաչապատման կայուն գործընթացին, որն էլ իր հերթին պետք է նպաստի առկա կանաչ տնկարկների գիտականորեն հիմնավորված խնամքի իրականացմանը և ֆունկցիոնալ նշանակությամբ նորերի ստեղծմանը:

Աշխատաժողովի քննարկումների արդյունքում որոշվել է.

1. Երևան համայնքում անհրաժեշտ է աստիճանական իրականացնել ամբողջությամբ դեֆորմացված և կենսունակության ավարտին մոտ գտնվող ծառատեսակների փոխարինում նույն, կամ առավել հիմնավորված ցեղատեսակի արժեքավոր և գեղազարդ ծառատեսակներով:

2. Երևան համայնքում անհրաժեշտ է իրականացնել ինվազիվ ծառատեսակների հերթականությամբ հեռացում և/կամ դրանց հնարավոր փոխարինում արժեքավոր և գեղազարդ ծառատեսակներով՝ տեղանքի առանձնահատկությունների հաշվառմամբ:

Սույն արձանագրությունն ընդունելի է աշխատաժողովի մասնակիցների կողմից, որը նրանք հաստատել են իրենց ստորագրությամբ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ մինչ օրս ծառերի փոխարինման աշխատանքներով փոխարինվել և տնկվել է.

2023թ.-ի ընթացքում՝

1. Սայաթ-Նովայի պողոտայում, Ֆրանսիայի հրապարակից մինչև Տերյան փողոցի խաչմերուկ՝ թվով 55 գնդաձև սոսի:
2. Մոսկովյան փողոցում՝ թվով 43 սակուռա ռոյալ բուրգունդի:
3. Կ. Ուլնեցու փողոցում՝ թվով 81 ձիակասկ սովորական և ձիակասկ պավիա:

2024թ.-ի գարանը՝

1. Թումանյան փողոցում՝ 158 հուդայածառ Եվրոպական:
2. Ալ. Մանուկյան փողոցում՝ 71 հատ ավրիցիա լենքորանյան և 54 հատ կեյրլեթերիա հուրանավոր:
3. Սայաթ-Նովայի պողոտայի վերջնամասում՝ 52 հատ սոսի գնդաձև:
4. Ալեք Մանուկյան փողոցից-Սայաթ-Նովայի պողոտայի վերջնամասում՝ 13 հատ ձիակասկ սովորական: (փոխարինում և լրացում)
5. Բագրատունյաց փողոց՝ 86 սոֆորա ճապոնական:

Բացի փոխարինումն իրականացվել է նաև փողոցային տնկարկների հիմնման և միատարրությունը պահպանված փողոցների լրացման աշխատանքներ: 2023թ.-ի ընթացքում հիմնվել է նոր փողոցային տնկարկ՝ Միկոյան փողոցում, իսկ լրացման աշխատանքներ կատարվել են Բաղրամյան և Ազատության պողոտաներում, Էրեբունի, Վազգեն Սարգսյան փողոցներում և Րաֆֆու փողոցի միջնաշերտում: 2024թ.-ի ընթացքում հիմնվել են նոր փողոցային տնկարկներ՝ Աբովյան և Բաբաջանյան փողոցների միջնաշերտում, Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտենի վարչական շենքի դիմաց, իսկ լրացման աշխատանքներ կատարվել է Խանջյան փողոցում (փոխարինումը նախատեսված է ս.թ. աշնանը): Բոլոր վերոնշյալ աշխատանքներն իրականացվել են հատվածային՝ ոչ ամբողջական:

Փոխարինվող ծառերի առավելությունների վերաբերյալ՝ տեղեկացվում է, որ ծառերը մատուցում են էկոհամակարգային ծառայություններ լայն սպեկտրով և սրանք այն ծառերն են, որոնք սկսած 2020 թվականից տնկվել են Երևան քաղաքի համայնքային ընդհանուր օգտագործվող կանաչ գոտիներում և փողոցային տնկարկներում:

Անհրաժեշտ է նշել, որ Կազմակերպությունը մասնագիտական կառույց է, որը ստեղծվել է Երևան քաղաքի ավագանու 16.12.2019 թվականի N 163-Ա որոշմամբ: Կազմակերպությունն ունի նեղ մասնագիտական հաստիքներ, որոնք զբաղեցնում են բարձր որակավորում ունեցող մասնագետներ, որոնք հրավիրվել են «Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԲՈՒՀ) Ագրոնոմիական ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմից, իսկ մասնագիտական այլ աշխատանքներ

իրականացնող աշխատակիցները հիմնականում ԲՈՒՀ-ի շրջանավարտներն են, հավելյալ 2023 թվականին ստեղծվել է Կազմակերպության տնօրենին կից գիտատեխնիկական խորհուրդ, որի նախագահն է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ժիրայր Վարդանյանը, իսկ անդամները՝ ոլորտի ճանաչված մասնագետներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ